ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ
ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ **«ԷՅԼԻԹԻԱ - ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ »**
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

№ __________

3113, Գյումրի, Գարեգին Ա-ի 4
Հեռ. /0312/ 5-80-90

"12" Ապրիլ 2022թ.

**ՀՀ ՇՄ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ**
**ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ**
**ՊԱՐՈՆ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ**
նույն համայնքի
«ԷՅԼԻԹԻԱ – ՄՍՈՒՐ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ»
ՀՈԱԿ-ի տնօրեն
Լ. Համբարձումյանից

## ԴԻՄՈՒՄ

Հարգելի պ-րն Սամսոնյան.

Խնդրում ենք Ձեր աջակցությունը մանկապարտեզի դահլիճի վերանորոգման հարցում:

Կանխավ շնորհակալ ենք:

Տնօրեն` Լ. Համբարձումյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ» ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Փաստաթղթաշրջանառության բաժին
Մուտք 12 04 2022թ.
Գրանցված է N 6706

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ**

**ՋՐԱՅԻՆ ՄԱՐԶԱՁԵՎԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՄԱՐԶԱԴՊՐՈՑ**

**ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ**

---

26.04.2022թ. Ե/14-2022

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏ
ՊԱՐՈՆ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սամսոնյան.

Գյումրու Ջրային մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցի պոմպի խափանման պատճառով անհրաժեշտ է ձեռք բերել նոր պոմպ, խողովակներ, անկյունակ, սոսինձ, որոնց համար անհրաժեշտ է 417600 /չորս հարյուր տասնյոթ հազար վեց հարյուր/ ՀՀ դրամ:

Կից ներկայացնում ենք անհրաժեշտ գումարի հաշիվ վավերագրերը:

Կանխավ շնորհակալություն:

Մարզադպրոցի տնօրեն Ս. Աղաբեկյան

26 09 2022
7498

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔ
«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆ ՀՈԱԿ

3104, Գյումրի, Վարդանանց հրապարակ, 1
Հեռ. (+374.312) 2.22.29

«14» 02 2022 թ.

№ 019

ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՊԱՐՈՆ Վ. ՍԱՄՍՈՆՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Սամսոնյան

Հայաստանի ազգագրության պետական թանգարանի մասնաճյուղ Գյումրու ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարան ստեղծելու ընթացքում, 1979-84թթ. մեծածավալ հավաքչական աշխատանքներ են իրականացվել գյումրի-Ալեքսանդրապոլի պատմությանը, մշակույթին, հասարակական, տնտեսական, ընտանեկան կենցաղի վերաբերյալ թանգարանային նյութեր հավաքելու նպատակով:

Թանգարանի բացումից հետո, մեծաթիվ արժեքավոր իրեր տարվել էին Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան: Այդ իրերի թվում էր Ալեքսանդրապոլ-Լենինականում հայտնի Սահրադյան ընտանիքին պատկանող <<Բաուման>> մակնիշի կաբինետային ռոյալը, որը չէր գրանցվել որպես թանգարանային միավոր և շուրջ 35 տարի դրված էր թանգարանի ճաշարանում: 2019թ. Գյումրու համայնքապետ պարոն Ս. Բալասանյանի ջանքերով դաշնամուրը ետ վերցվեց ՊՆ ենթակայության տակ գտնվող Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարանից և վերադարձվեց Գյումրի և այժմ պահպանվում է <<Կումայրի>> պատմամշակութային արգելոց թանգարանի ֆոնդում: Խնդրում ենք ռոյալը պատմության թանգարանում ցուցադրելու նպատակով հատկացնել գումար՝ 581.000 (հինգ հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ, այն Երևանի մասնագիտացված արվեստանոցում վերականգնելու նպատակով, քանի որ Գյումրին չունի համապատասխան մասնագետների խումբ գործիքը վերականգնելու համար:

Տնօրեն՝ _______________ Ի. Ավագյան

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԳՅՈՒՄՐԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ»
Քարտուղարության բաժին
ՍՏԱՑՎԱԾ Է 14 02 2022
ԳՐԱՆՑՎԱԾ Է N 2559